ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՏԵՍԱԲԱՆ

Մ. Վ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

«Թեորետիկական մարքսիզմի ծանր հրետանի»,— այդպիսին էր Ստ. Շահումյանը թե՛ ընդհանրապես և թե՛ ազգային հարցում մասնավորապես։ Եվ իրոր լենինյան տիպի այդ ականավոր պրոֆեսիոնալ ռևոլյուցիոները իր մեջ կազմակերպչական բարձր տաղանդը սերտորեն միահյուսելով տեսական մեծ կարողության հետ, հանդես եկավ նաև որպես ազգային հարցի խորը դիտակ և ճանաչված թեորետիկ ու պրակտիկ։

Ստ. Շահումյանին շատ է զբաղեցրել ազգային հարցը։ Դա ամենից առաջ բացատրվում է նրանով, որ նա ճիշտ է հասկացել ազգային հարցի իմաստն ու տեղը հասարակական կյանքում, մարքսիզմ-լենինիզմի մեջ։ Ազգային հարցը սոցիալիստական ռևոլյուցիայի և պրոլետարիատի դիկտատուրայի ընդհանուր հարցի բաղկացուցիչ մասն է և նրա ճիշտ լուծումն ունի միանգամայն կարևոր նշանակություն ժողովուրդների կյանքում։ Մյուս կողմից՝ Շահումյանն ապրել ու գործել է Անդրկովկասի և Ռուսաստանի բազմազգ միջավայրում, ուր ցարիզմը ոչ միայն վարում էր վելիկոռուսական շովինիզմի քաղաքականություն, այլև տեղական բուրժուազիայի ու կալվածատերերի և նրանց հավատարիմ պարտիաների հետ միասին բորբոքում էր ազգային թշնամանք, կազմակերպում ազգամիջյան կոտորածներ։ Ահա թե ինչու պայքարը նացիոնալիզմի դեմ եղել է Անդրկովկասի և ընդհանրապես Ռուսաստանի բոլշևիկների կարևորագույն խնդիրներից մեկը։ Ստ. Շահումյանի դիպուկ արտահայտությամբ «Կովկասում ռևոլյուցիայի ամենասխրիմ թշնամին միշտ եղել է և կմնա նացիոնալիզմը»[1]։ Ուստի նացիոնալիզմի դեմ մղվող պայքարի գենը բոլշևիկները միշտ էլ սուր են պահել և այժմ էլ անհաշտ են նրա ամեն մի արտահայտության նկատմամբ։

Եթե այդ բոլորին ավելացնենք հայ ժողովրդի տարաբախտ վիճակը և դաշնակցականների ու բուրժուական այլ նացիոնալիստների ազգակործան բաղարականությունը, ապա թվում է պատկերը լրիվ կլինի։ Ստ. Շահումյանն իրեն դրսևորելով որպես իսկական ռևոլյուցիոն-հայրենասեր, հանդես է եկել Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ազատագրման լենինյան դրոշով և միաժամանակ արժանի ուշադրություն դարձրել նաև բազմաչարչար հայ ժողովրդի փրկության հարցին։ Ստ. Շահումյանը եղել է ոչ միայն համապարտիական մասշտաբի խոշոր մտածող ու աշխատող, միջազգային բանվորական շարժման անվանի գործիչ, այլև հայկական կյանքի, հայ ժողովրդի պատմության ու կուլտուրայի մեծ գիտակ, հայ ժողովրդի ազատագրական պայքարին անմիջականորեն սիրտ ուղի ցույց ավող։

Այսպիսով, պատմական մի շարք պատճառների ու հանգամանքների բերումով, Ստ. Շահումյանը հատուկ ուշադրություն է դարձրել ազգային հարցին, ընդ որում այդ ասպարեզում նա հանդես եկավ որպես մեծահանճար Լենինի հավատարիմ աշակերտն ու մերձավորագույն գինակիցը, որը ծավալեց տեսական ու գործնական բեղմնավոր գործունեություն, իր արժանի ավանդը մուծեց ազգային հարցի տեսության ու ծրագրի մշակման գործում և դարձավ Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային բաղարականության հետևողական պաշտպաններից ու կիրառողներից մեկը։

Ստ. Շահումյանը, վաղ հասակից ականատես լինելով ու ինքն էլ ենթարկվելով դասակարգային ու ազգային ճնշման, ատելությամբ է լցվում դեպի տիրող բռնապետական կարգերը, որոնք ժողովուրդներին դատապարտում էին անլուր կեղեքման ու հալածանքների։ Արդեն XX դարի շեմքին Ստ. Շահումյանը, որպես ձևավորված մարքսիստ, վճռական պատերազմ հայտարարեց տիրող կարգերին ու բուրժուական նացիոնալիզմին և հաստատակամորեն

---

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, Երևան, 1938, էջ 33։

մարտնչում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի համար, առանց ազգային խտրության բոլոր ժողովուրդների ազատության, իրավահավասարության ու եղբայրության համար։ Դա իր ցայտուն արտահայտությունը գտավ թե՛ Ստ. Շահումյանի կրակոտ ելույթում՝ նվիրված հայտնի գրող Ղ. Աղայանի հոբելյանին և թե՛ հատկապես նրա կողմից գրված «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» Մանիֆեստում, որը լույս տեսավ 1902 թվականին՝ իսկրայական ուղղության առաջին հայատառ «Պրոլետարիատ» թերթում։ Այդ Մանիֆեստը, որ առհասարակ ուներ մեծ նշանակություն, պետք է համարել նաև Ստ. Շահումյանի առաջին խոշոր աշխատությունն ու ելույթը ազգային հարցի վերաբերյալ։ Բնորոշ է, որ այն անմիջապես գրավեց Վ. Ի. Լենինի ուշադրությունը և նա հատուկ հոդվածով «Իսկրայի» էջերում ջերմորեն ողջունեց նման տեսությունների փաստաթղթի երևան գալը։ «Մենք ամբողջ հոգով ողջունում ենք «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» Մանիֆեստը և մանավանդ ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու նրա ուշագրավ փորձը։ Խիստ ցանկալի կլիներ, որ այդ փորձը հասցվեր մինչև վերջը»[1]։

Ստ. Շահումյանը լիովին արդարացրեց մեծ առաջնորդի հույսերն ու սպասելիքները, և իրոք, սկսած հաջող փորձը հասցրեց մինչև վերջ։ Նա գրեց նոր աշխատություններ, որոնց մեջ մարքսիստական հետևողականությամբ լուսաբանում է ազգային հարցը, քննարկում նրա բազմազան կողմերը։

Դեռ արտասահմանում եղած ժամանակ՝ 1903 թվականին Ստ. Շահումյանը հանդես եկավ «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» ռեֆերատով, որը լույս տեսավ 1906 թվականին՝ սկզբում «Կայծ» հայերեն բոլշևիկյան թերթում և ապա առանձին գրքով։ Այն առաջին անգամ հայ ընթերցողին մայրենի լեզվով բացատրում է ազգի մարքսիստական թեորիայի ու ՌՍԴԲՊ ազգային ծրագրի էությունը, խարազանում է բուրժուական նացիոնալիզմը և հետևողականորեն պաշտպանում պրոլետարական ինտերնացիոնալիզմը։ Ստ. Շահումյանի տվյալ աշխատության հետ օրգանական միասնության մեջ է դնվում նրա՝ մի քիչ ուշ գրած նոր «Ռեֆերատ ազգային հարցի մասին» աշխատությունը։

Հետագա տարիներին Ստ. Շահումյանը նոր նյութով է զբաղվում ազգային հարցով։ Հայտնի է, որ առանձնապես ռևոլյուցիոն շարժման նոր վերելքի ժամանակաշրջանում ազգային հարցը ծառացավ իր ամբողջ սրությամբ։ Դա մի հարց էր, որի ելակետային դրույթներն արդեն տվել էին Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը, իսկ Վ. Ի. Լենինը նոր պայմաններում՝ իմպերիալիզմի և պրոլետարական ռևոլյուցիաների դարաշրջանում, զարգացնելով այդ դրույթները, ստեղծեց ամբողջական ու կուռ ուսմունք ազգային-գաղութային հարցի մասին։ Նա իր բազմաթիվ աշխատություններում («Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին», «Քննադատական դիտողություններ ազգային հարցի մասին» և այլն) մշակեց ազգային հարցի մարքսիստական թեորիան ու բոլշևիկյան ծրագիրը և տվեց պարտիայի ազգային քաղաքականության հիմունքները։

Ստ. Շահումյանը վաղ շրջանից սերտորեն կապված էր Վ. Ի. Լենինի հետ, բայց ինչպես վկայում է Ն. Կրուպսկայան, ռևոլյուցիոն շարժման նոր վերելքի տարիներին «Իսկրայի» նամակագրությունը Շահումյանի հետ ազգային հարցի մասին աշխուժացավ»[2]։ Այդ նամակագրության մեջ քննարկվում էին ազգային հարցի զանազան կողմեր և հատկապես ուշադրություն էր դարձվում այդ բնագավառում բոլշևիկյան հատուկ ծրագրի մշակմանը։ Պարտիայի առաջնորդը բարձր էր գնահատում Ստ. Շահումյանին, որպես խոշոր մտածողի ու ականավոր գործչի և նրան մասնակից դարձնում ազգային հարցի բոլշևիկյան ծրագրի մշակմանը։

Վ. Ի. Լենինը Ստ. Շահումյանին առաջարկում էր հանդես գալ ազգային հարցի մասին համապարտիական նշանակություն ունեցող բրոշյուրներով ու հոդվածներով։ Այսպես, օրինակ, 1913 թ. օգոստոսի 24-ին Վ. Ի. Լենինը Ստ. Շահումյանին գրում է, որ նա հոդվածներ ու նյութեր ուղարկի ազգությունների հարաբերությունների մասին Ռուսաստանում, Կովկասում, Պարսկաստանում, Թուրքիայում։ Մի քիչ ավելի ուշ՝ 1913 թ. դեկտեմբերի 6-ին Վ. Ի. Լենինը նորից անդրադառնալով այդ խնդրին, Ստ. Շահումյանին գրում է. «Ազգային հարցի վերաբերյալ պոպուլյար բրոշյուրը շատ է հարկավոր։ Գրեցեք։ Սպասում եմ պատասխանին և ամուր, ամուր սեղմում եմ Ձեր ձեռքը»[3]։ Դարձյալ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ Ստ. Շահումյանին հարցումներ են կատարվում նաև «Պրոսվեշչենիե» ժուռնալի խմբագրությունից։ Այսպես, Ա. Ենուկիձեն Պետերբուրգից Ստ. Շահումյանին գրում է. «Պրոսվեշչենիե»-ից խնդրեցին, որ

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 411։

[2] Н. К. Крупская, Воспоминания о Ленине, Москва, 1957, էջ 289։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 627։

դու մի ընդհանուր հոդված գրես ազգային հարցի մասին։ Ինձ ասին, որ դա Իլյիչի հանձնարարությունն է»[1]։

Պետք է նշել, որ Ստ. Շահումյանը Վ. Ի. Լենինի խորհրդով ձեռնամուխ է լինում այդպիսի աշխատություն գրելուն, բայց այն ընդհատվում է մի շարք պատճառներով։ Այդ առթիվ նա 1914 թ. ապրիլի 17-ին Վ. Ի. Լենինին գրում է. «Ազգային հարցի վերաբերյալ բրոշյուրը սկսել էի գրել, բայց չավարտեցի, մասամբ ձեզ հետ տարաձայնելու պատճառով (թվում է 1902 թ. սկսած առաջին անգամ եմ տարաձայնում Ձեզ հետ*), իսկ գլխավորապես այն պատճառով, որ հարկավոր է հայերեն լեզվով բրոշյուր գրել ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին։ Ան.-ի** ելույթից հետո այդ պահանջը Կովկասում դարձել է չափազանց ժողովրդական։ Բրոշյուրը (բննադատական) վաղուց արդեն գրված է և շուտով, հավանաբար, կհանձնեմ տպագրության։ Բացի այդ, հարկավոր էր շատ հոդվածներ գրել Թիֆլիսի հայերեն թերթի համար։ Ցավոր սրտի, անիծյալ ծառայությունը (վաստակի համար) միշտ էլ ինձնից շատ ժամանակ և ուժ է խլում և ստիպված եմ քիչ աշխատել ինձ վրա»[2]։

Ստ. Շահումյանի նամակում հիշատակված բննադատական բրոշյուրը նրա «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» նշանավոր աշխատությունն է, որը լույս տեսավ 1914 թվականին։ Այդ աշխատությունը գրելու առիթը այն էր, որ 1913 թվականին սոցիալիստների «թեորետիկ» Դ. Անանունը դաշնակցական «Նոր հոսանք» ժուռնալում հանդես եկավ մի շարք նացիոնալիստական հոդվածներով, որոնց մեջ փորձում էր հիմնավորել կուլտուր-ազգային ավտոնոմիան որպես ազգային հարցի լուծման «հնամաղարմանա»։ Ստ. Շահումյանը Աստրախանի աքսորավայրում գրած իր վերոհիշյալ աշխատության մեջ բացահայտում է կուլտուր-ազգային ավտոնոմիայի ողջ սնանկությունը և նրա բուրժուա-նացիոնալիստական ռեակցիոն էությունը։

Ստ. Շահումյանը միաժամանակ հիմնավորում ու լուսաբանում է ազգային հարցի բոլշևիկյան ծրագիրը, որպես ճնշված ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի ազատագրման միակ իսկական ծրագիր։

Վլադիմիր Իլյիչը իրազեկ դառնալով Շահումյանի այդ աշխատության Երևան գալուց, 1914 թ. մայիսի 19-ին գրած նամակում նշում է, որ «Ան-ի դեմ Ձեր բրոշյուրի մասին «Պրոսվեշչենիե»-ում անպայման ավեր Selbstanzeige**** կամ շարադրանք»[3]։ Պետք է ենթադրել, որ բորբոքված առաջին համաշխարհային պատերազմը խանգարեց այդ խնդրի կատարմանը։ Հնարավոր է նաև, որ Ստ. Շահումյանը բնդհանրապես ազգային հարցի մասին նյութեր է ուղարկել Վ. Ի. Լենինին, բայց դրանք կանգան պատճառներով և հատկապես ոստիկանական հետապնդումների հետևանքով տեղ չեն հասել։ Ինչ խոսք, որ այս ուղղությամբ դեռ պետք է շարունակվեն արխիվային պրպտումները։

Սակայն Ստ. Շահումյանի, որպես ազգային հարցի տեսաբանի, գերը չի սահմանափակվում միայն բրոշյուրներ ու հոդվածներ գրելով։ Վ. Ի. Լենինը խնդրում և պահանջում էր, որ նա անմիջականորեն մասնակցի ազգային հարցի բոլշևիկյան ծրագրի մշակմանը։ Եվ այդ ժամանակ թեև Ստ. Շահումյանն աքսորված էր, այնուամենայնիվ նա անում է մաքսիմումը Վ. Ի. Լենինի ցուցումները կատարելու համար։

Հայտնի է, որ ազգային հարցի բոլշևիկյան ծրագրի մշակման գործում կարևոր դեր կատարեց պարտիայի Կենտկոմի և պարտիական պատասխանատու աշխատողների Պորոնինոյի խորհրդակցությունը, որը գումարվեց 1913 թ. սեպտեմբերին։ Բնորոշ է, որ խորհրդակցությունից հետո Վ. Ի. Լենինն այնտեղ ընդունված բանաձևը ազգային հարցի մասին ուղարկեց Ստ. Շա-

---

[1] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկ. ֆիլիալ, արխիվ, ֆ. 7։

* Այդ տարաձայնությունների առթիվ դեռ կխոսենք, իսկ ինչ վերաբերվում է տվյալ դեպքում և տվյալ կապակցության մեջ 1902 թվականի հիշատակմանը, ապա մեր կարծիքով դա որոշակի վկայություն է այն մասին, որ Շահումյանը Վ. Ի. Լենինի հետ առաջին անգամ անձնապես հանդիպել է ոչ թե 1903 թ. գարնանը, ինչպես սովորաբար նշվում է մեր գրականության մեջ, այլ 1902 թ. աշնանը։ Այլ կերպ ի՞նչ նկատառումներով է հիշատակվում հենց 1902 թվականը Մ. Վ.։

** Ան.-ը տվյալ դեպքում սոցիալիստների պարագլուխ Դավիթ Անանունն էր։

*** Նկատի է առնվում «Մեր խոսքը» բոլշևիկյան շաբաթաթերթը, որի առաջին ու միակ №-ը լույս տեսավ 1914 թ. հունվարին։

[2] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 268։

**** Հաղորդում հեղինակից։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 140։

Հումյանին (գտնվում էր Աստրախանում), որպեսզի նա իր կարծիքը հայտնի։ Այդ կարծիքը հայտնվեց հատուկ նամակով, որտեղ Ստ. Շահումյանը ընդհանուր առմամբ հավանություն է տալիս բանաձևին, բայց և անում է մի քանի դիտողություններ, որոնց մասին կխոսենք ստորև։

Դեպի Ստ. Շահումյանն ունեցած մեծագույն վստահության մասին է խոսում նաև այն վաստը, որ Լենինը 1914 թ. մայիսի 19-ին գրած նամակում Շահումյանից պահանջում էր ակտիվ մասնակցություն ունենալ ազգերի իրավահավասարության և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին օրենսգծի մշակմանը, որը պետք է Պետական դումա մտցներ բոլշևիկյան ֆրակցիան. «Եկեք, գրենք այսպիսի նախագիծ... Ինձ թվում է, որ այդ ճանապարհով կարելի կլինի հանրամատչելիորեն պարզաբանել կուլտուր-ազգային ավտոնոմիայի հիմարությունը և վերջնականապես ոպանել այդ հիմարության կողմնակիցներին...

Անմիջապես գրեցեք, թե համաձա՞յն եք արդյոք օգնելու։ Ընդհանրապես հաճախակի գրեցեք, ոչ պակաս շաբաթը մեկ անգամ։ Անթույլատրելի է երկար ժամանակով չպատասխանելը, նկատի ունեցեք այդ, հատկապես այժմ։

Սեղմում եմ Ձեր ձեռքը։ Ձեր Վ. Ի.»[1]։

Լենինը միաժամանակ ծանոթանալու համար Ստ. Շահումյանին է ուղարկում վերոհիշյալ «բենի իր կազմած նախագիծը։

Ստ. Շահումյանը 1914 թ. մայիսի 30-ին Վ. Ի. Լենինին ուղարկած պատասխան նամակում չերմ շնորհակալություն հայտնելով «վստահության և ուշադրության համար», համեստաբար գրում է. «Նախագիծը հպիվ թե ես ինքս կարողանայի կազմել, բայց առջևս ունենալով Ձեր պատրաստի նախագիծը, կարող եմ հայտնել լիակատար բավարարվածություն ու համաձայնություն»[2]։

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Ստ. Շահումյանն անմիջականորեն զբաղվելով Անդրկովկասի բոլշևիկների գործունեությունը, անհողդողդ կերպով անց է կացնում պրոլետարական ինտերնացիոնալիզմի գիծը և ազգային հարցի մասին հանդես գալիս նոր փայլուն աշխատություններով՝ «ՌՍԴԲՊ Կովկասյան կազմակերպությունների խորհրդակցության բանաձևերը», «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը», «Ազգային հարցը և ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան» և այլն։

Ընդհանուր առմամբ, դեռ նախասոցիալիստական տարիներին Ստ. Շահումյանը հանդես եկավ որպես ազգային հարցի աշխի ընկնող տեսաբան, իսկ նոր հեղափոխեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, նա դարձավ բազմազգ սովետական պետության կառուցողներից մեկը՝ հետևողական պայքար մղելով Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության գործնական կիրառման համար։ 1917—18 թվականներին Ստ. Շահումյանն ազգային հարցի մասին հանդես եկավ բազմաթիվ նոր ելույթներով, որոնք անմիջականորեն կապված էին պարտիայի ազգային քաղաքականության իրականացման հետ և կարևոր տեղ են գրավում ականավոր բոլշևիկի գաղափարական ժառանգության մեջ։

Այսպիսով, Ստ. Շահումյանի բեղմնավոր գործունեության մեջ կարևոր տեղ է բռնել ազգային հարցը։ Ընդ որում պետք է մատնանշել, որ Ստ. Շահումյանի հայացքները ազգային հարցի մասին լուսաբանելու ու շարադրելու համար բավական չէ յուրացնել բացառապես ազգային հարցին նվիրված նրա վերոհիշյալ աշխատությունները։ Անհրաժեշտ է նաև խորությամբ ուսումնասիրել Ստ. Շահումյանի ողջ գործունեությունը, նրա գրական-գաղափարական ժառանգությունը ու պրակտիկ-կազմակերպչական աշխատանքը։ Եվ դա բնական է, որովհետև Ստ. Շահումյանի, որպես խոշոր մարքսիստի համար ազգային հարցի արմատական լուծումը ենթակա է եղել սոցիալական մեծ պրոբլեմի հարցին, որի լուծմանն է նվիրել նա իր ամբողջ կյանքն առանց մնացորդի։

* * *

Ազգային հարցի վերաբերյալ Ստ. Շահումյանի ելույթները և հատկապես նրա «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան», «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» խորիմաստ աշխատությունները առաջին անգամ մայրենի լեզվով հայ իրականության մեջ ամբողջական ձևով ներկայացրին ազգային հարցը մարքսիստական-լենինյան դիրքերից։ Այնտեղ տրված է

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 140, 141։
[2] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 456։

ազգային հարցի լենինյան թեորիայի ու բոլշևիկյան ծրագրի ընդհանուր գիտական շարադրանքը, լուսաբանումն ու հիմնավորումը։

Ստ. Շահումյանը ամենից առաջ ցույց է տալիս, որ ազգային հարցը ժամանակակից հասարակության ամենաարդի ու լուրջ պրոբլեմներից մեկն է։ Դա է՛լ ավելի ցայտուն է դրսևորվում իմպերիալիզմի դարաշրջանում, երբ ծայր աստիճան սրվում են հակասությունները մի կողմից՝ մի բուռ տիրապետող «քաղաքակիրթ» ազգերի (ավելի ճիշտ՝ նրանց իշխող դասակարգերի) և մյուս կողմից աշխարհի հարյուր միլիոնավոր գաղութային ու կախյալ ժողովուրդների միջև։ Այդ ժողովուրդները չհաշտվելով իրենց ստրկական կրության հետ՝ դուրս են գալիս ազատագրական պայքարի։

Այնուհետև, Ստ. Շահումյանն ընդգծում է, որ «ազգային հարցը — հասարակական հարց է, և որպես այդպիսին նա շոշափում է զանազան հասարակական դասակարգերի շահերը»[1]։ Դեմն մի դասակարգ ազգային հարցին մոտենում է ելնելով իր շահերից։ Բուրժուազիայի համար ձեռնտու է, որ ազգերը գտնվեն խավարի ու ստրկության մեջ, ուստի նրա գաղափարախոսները ձգտում են ամեն գնով խճճել ճշմարտությունը ազգային հարցի մասին։ Միայն պրոլետարիատն է, որ կանգնած է ճնշված ժողովուրդների ազատագրման դիրքերում և նրա տեսաբանները տալիս են ազգային հարցի միակ ճշմարտացի լուսաբանումը։

Սկզբունքային կարևորություն ունեցող այդ մեթոդոլոգիական ճիշտ դիրքորոշումից հետո Շահումյանը կանգ է առնում «ազգ» մասին մարքսիստական թեորիայի մի այնպիսի կարևոր խնդրի վրա, ինչպիսին է ազգ հասկացողությունը։

Ազգի բնորոշման հարցում բախվում են երկու հակադիր դասակարգային տեսակետներ։ Ստ. Շահումյանը ցույց է տալիս, որ բուրժուազիայի իդեոլոգները այս հարցում ևս գավանում են մետաֆիզիկական ու իդեալիստական հայացքներ։ Նրանք, որպես կապիտալի վարձու ծառաներ, ցուցարերում են բուրժուազիային հատուկ մարի կատարյալ «ապիկարություն ու սնանկություն»։

Ազգի բնորոշման հարցում բուրժուական մտածողների մի մասը բոլորովին հրաժարվում է որոշակի պատասխանից, քանի որ անորոշությունը միանգամայն օգտակար է բուրժուազիային, իսկ մյուս մասը՝ փորձելով տալ ազգի սահմանումը, կանգ է առնում այսպես կոչված հոգեպսիխիկական տեսակետի վրա։ Բացահայտելով բուրժուական սոցիոլոգիայի սահմանափակությունն ու իդեալիստական ոգին ազգի բնորոշման հարցում, Շահումյանը գրում է. «Ազգային հարցը լուծելու համար նախ հարկավոր է հասկանալ, ինչ բան է ազգությունը և ձեզ կամ պատասխանում են, որ չեն հասկանում ինչ է, կամ ասում են ազգությունը—ծագումը չէ, տեռիտորիա չէ, լեզուն չէ, կրոնը չէ, և ոչ էլ դրանց ամբողջությունը, կամ զանազան կոմբինացիաները, այլ ազգային ինմնագիտակցությունը, կամ ուրիշ բուրժուական գիտնականների ասելով, «ազգային գաղափարը», «ազգային ոգին» և այլն»[2]։ Կարճ ասած՝ ազգը դիտվում է որպես սուբյեկտիվ հասկացողություն, որի համաձայն ազգեր գոյություն ունեն միայն մարդկանց գիտակցության մեջ և ոչ թե իրական կյանքում։

Շահումյանը ցույց է տալիս, որ բուրժուական իդեոլոգների և նրանց զինակից ռևիզիոնիստների բարոզը «ազգային բնավորության», «ազգային ինքնագիտակցության» կամ «ազգային ոգու» մասին տանում է դեպի ազգերի անիրավահավասարության հավերժացում, որովհետև տիրապետող ազգերի կառավարողները անընդհատ թմրկահարում են այն մասին, որ իրենք ունեն յուրահատուկ, այսպես կոչված «բարձր ազգային բնավորություն», «ազգային ոգի» և կոչված են իշխելու մյուսների վրա։

Շահումյանը, անցնելով ազգային հարցի դրվածքի վերլուծությանը, հայ իրականության մեջ ցույց է տալիս, որ այստեղ էլ բուրժուական նացիոնալիստները կանգնած են նույն իդեալիստական տեսակետի վրա։

Ի հակադրություն բուրժուական-իդեալիստական տեսակետի, Ստ. Շահումյանը՝ զինված մարքսիստական-լենինյան փիլիսոփայությամբ, ազգային հարցը դիտում է ռեալ իրականության մեջ և այդ դիրքերից էլ բացահայտում ազգ հասկացողության գիտական էությունը։ «Ազգությունը,— գրում է Ստ. Շահումյանը,— մի կողմից մի որոշ բնական երևույթ է, իր բնական՝ նյութեղեն կամ հոգեբանական բովանդակությամբ, մյուս կողմից՝ նա մի որոշ հասարակական երևույթ, հասարակական հարաբերություն է։ Ուրիշ խոսքով, մի կողմից՝ նա միևնույն տերիտո-

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, Երևան, 1955, էջ 193։
[2] Նույն տեղում, էջ 196։

տրիայի վրա խմբված, շատ թե քիչ ընդհանուր ծագումով կապված, միևնույն լեզվով խոսող, շատ թե քիչ ընդհանուր կրոնով, բարքերով ու տրադիցիաներով ապրող միլիոնավոր, երբեմն տասնյակ և նույնիսկ հարյուր միլիոնավոր մարդկանցից բաղկացած մի բազմություն է, մյուս կողմից՝ նա մի հասարակական կամ պետական օրգանիզմի տեսակ է»[1]: Ազգությունը համարելով հասարակական օրգանիզմ, Շահումյանն ամենից առաջ նկատի ունի նրա տնտեսական կյանքի ընդհանրությունն ու կապակցությունը: Որ այդ այդպես է, երևում է Շահումյանի «Ռեֆերատ ազգային հարցի մասին» նոր աշխատությունից, որտեղ տալով ազգի բնորոշումը, նա գրում է, «Ազգությունը միլիոնավոր մարդկանցից բաղկացած մի բազմություն է, կապված որոշ չափով ընդհանուր ծագումով և անցյալով, որոշ չափով ընդհանուր ֆիզիկական և հոգեկան նկարագիր ունեցող, միևնույն լեզվով խոսող, մեծ մասամբ միևնույն կրոնը դավանող և այդ բոլորով հանդերձ՝ մի ամբողջացած տնտեսական, հասարակական-քաղաքական օրգանիզմ կազմող բազմություն»[2]:

Ինչ խոսք, որ Ստ. Շահումյանի՝ ազգին տված այս բնորոշումը գիտական է, մարքսիստական: Ըստ էության ազգի հասկացողության հիմքում նա դնում է չորս հիմնական հատկանիշ, լեզվի ընդհանրություն, տերիտորիայի ընդհանրություն, տնտեսական կյանքի ընդհանրություն և հոգեկան կերտվածքի ընդհանրություն: Հոգեկան կերտվածքի տակ նա հասկանում է տվյալ ժողովրդի ընդհանուր տրադիցիաներն ու բարքերը, կուլտուրայի առանձնահատկությունները, ինչպես նաև շատ թե քիչ չափով միևնույն կրոնը դավանելը: Վերջին մոմենտը (կրոնական դավանանքը) հիշատակելիս Ստ. Շահումյանը հաշվի է առել այն ժամանակվա վիճակը, երբ աշխարհում չկար և ոչ մի ժողովուրդ, որն ունի կամ ոչն չափով չդավաներ միևնույն կրոնը: Բայց բնականաբար այդ հանգամանքն ունի հարաբերական նշանակություն, քանի որ ասենք, սոցիալիստական ազգերը ձևավորվում են նաև կրոնի դեմ պայքարելով և նրանք բառիս իսկական իմաստով աթեիստ ազգեր են:

Այսպիսով, ազգի բոլոր հիմնական 4 տարրերը առկա են Շահումյանի բնորոշման մեջ: Ընդ որում նա այդ հատկանիշները վերցնում է մի ամբողջության մեջ, իրար հետ կապված:

Ազգի մարքսիստական-լենինյան թեորիայի մյուս կարևոր հարցը ազգերի ծագումն ու զարգացումն է: Այս հարցում էլ տրամագծորեն հակադրվում են երկու տեսակետներ բուրժուական և պրոլետարական: Բուրժուազիայի իդեոլոգները ազգը համարում են մշտնջենական կատեգորիա, բնական երևույթ, որը հանդես է եկել հասարակության գոյության հենց սկզբից և մինչև վերջ էլ անբաժան է նրանից:

Ի հակադրություն բուրժուական հայեցակետին մարքսիզմ-լենինիզմը գտնում է, որ ազգը պատմական կատեգորիա է և հանդես է եկել հասարակության զարգացման որոշ աստիճանի վրա: Բացահայտելով այդ միտքը, Վ. Ի. Լենինը «Կարլ Մարքս» նշանավոր աշխատության մեջ գրել է. «Ազգերը հասարակական զարգացման բուրժուական դարաշրջանի անխուսափելի արդյունքը և անխուսափելի ձևն են»[3]:

Կանգնած լինելով այդ միակ ճիշտ, մատերիալիստական տեսակետի վրա, Շահումյանը ուրվագծորեն նշում է, որ ազգը, իրոք, պատմական կատեգորիա է և որպես այդպիսին նա հանդես է եկել կապիտալիզմի զարգացման հետ միասին: Ահա թե ինչու Շահումյանը դեռևս 1906 թ. գրում էր, որ «...ազգային հարցը, իր ժամանակակից իմաստով, գոյություն չուներ Եվրոպայում սրանից մոտ 100 տարի առաջ, նա ամբողջովին ծնունդ է XIX դարի և առաջին հայացքից հենց կարելի է այդ նկատել— ամենասերտ կերպով կապված է ժամանակակից կապիտալիստական արդյունաբերության և բուրժուական հասարակական կազմի հետ»[4]:

Ազգերի ձևավորումը սկսվում է կապիտալիզմի դարաշրջանից, որովհետև ազգի հիմնական հատկանիշները միասին և ամբողջական ձևով երևան են գալիս միայն այդ ժամանակից: Իհարկե ազգի տարրերը՝ լեզուն, տերիտորիան, կուլտուրական ընդհանրությունը գալիս են վաղ ժամանակից, բայց դրանք մինչկապիտալիստական ժամանակաշրջանում բառիս բուն իմաստով դեռևս չեն ստանում համազգային կոմպակտ բնավորություն: Ազգի համար այդ պայմանները հասունանում են, իսկ հատկապես տնտեսական կյանքի ընդհանրությունն ստեղծվում է միայն ուշացած կապիտալիզմի դարաշրջանից, երբ զարգանում են ապրանքային տնտեսությունը, առև-

---

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 197—198:
[2] Նույն տեղում, հ. 2, էջ 246:
[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 78:
[4] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 193:

տուրն ու արդյունաբերությունը, որոնք կոտրում են բոլոր մարտային արգելքները և երկրի ու աշխարհի բոլոր մասերը կապում միմյանց հետ։ Այդ միտքը կոնկրետացնելով եվրոպական ազգերի կազմավորման վերաբերյալ, Ստ. Շահումյանը գրում է. «Եվրոպական համայնքների և ցեղային մարմինների մերձեցումը և ազգային միացումը (կոնսոլիդացիան) միջին և նոր դարերի ընթացքում կատարվում էր այն ժամանակ, երբ արդեն բնական տնտեսությունը քայքայվում էր և տեղի էր տալիս նոր ապրանքային փոխանակության, առևտրի և դրամական տնտեսության զարգացմանը»[1]։

Խորանալով ազգերի առաջացման պատմական արմատների վերլուծության մեջ, Շահումյանը ցույց է տալիս ժողովուրդների ձևավորման ու զարգացման ուղին՝ տոհմ-ցեղ-ազգություն հաջորդականությամբ։ «Զարգացման այդ ճանապարհը, տոհմ-ցեղ-ազգություն, ընդհանուր է եղել բոլոր ժողովուրդների համար»[2]։ Ակներևաբար հայտնի է, որ մարդիկ սկզբում ապրել են հորդաներով, իսկ հետո արյունակցական-ազգակցական կապերի հիման վրա կազմել տոհմեր։ Այնուհետև արտադրողական ուժերի զարգացման շնորհիվ տոհմերի միավորումից ստեղծվում են ցեղեր, իսկ վերջիններից ցեղային միություններ։ Դասակարգային հասարակության պայմաններում (սկսած ստրկատիրականից) տարբեր ցեղերի և ցեղային միությունների միավորումից առաջ են գալիս նոր սոցիալական օրգանիզմներ — ժողովուրդներ, որոնք գնալով ամրանում են և ֆեոդալիզմի կործանման ու կապիտալիզմի զարգացման ժամանակաշրջանում վերածվում ազգերի. «Այդ վերջին պրոցեսը,— գրում է Ստ. Շահումյանը,— կարելի է ասել կատարվել է արդեն մեր աչքերի առաջ», երբ «հետզհետե տնտեսական զարգացումը ավելի ու ավելի սերտ կապեր է հաստատում մարդկանց մեջ և ստեղծում ավելի խոշոր անտեսական-հասարակական օրգանիզմներ»[3]։ Ստ. Շահումյանը ազգը համարում էր հենց այդպիսի օրգանիզմ, որը կամ պետություն է և կամ ձգտում է դառնալու այդպիսին, բանի որ, ինչպես ցույց է տվել Լենինը, «ազգային պետությունը կապիտալիզմի կանոնն ու «նորման է»[4]։ Սա, իհարկե, չի նշանակում, որ ինքնուրույն պետականությունը ազգ լինելու հատկանիշ է։ Բայց սկսած կապիտալիզմի դարաշրջանից ժողովուրդները ձեռք են բերում այն անհրաժեշտ կայունությունը, որը նրանց դարձնում է ազգ։

Անշուշտ Շահումյանը նույնպես գտնում էր, որ ազգի մի շարք հատկանիշներ գալիս են դեռ վաղ ժամանակներից, բայց դրանք ձևավորվում են կապիտալիզմի օրոք։ Խոսելով լեզվի, կուլտուրայի, տրադիցիաների ու սովորությունների մասին Շահումյանը մատնանշում է, որ այդ բոլորը «տնտեսական զարգացման հետ ձեռք-ձեռքի տված, ընթացել են անարգել և անդադար կերպով, մինչև որ ստեղծվել են ժամանակակից ազգերը»։ Հատկապես կանգ առնելով լեզվի զարգացման վրա նա ցույց է տալիս, որ «զանազան ցեղային բարբառներից ստեղծվել են ժամանակակից ազգային լեզուները»։ Բնորոշ է Շահումյանի հայացքը լեզվի մասին, որպես համաժողովրդական, համազգային գործոնի մասին։ Տալով լեզվի, որպես մարդկանց հաղորդակցության միջոցի բնութագիրը, նա գրել է. «Լեզուն այդպիսով հասարակական կապակցության հիմնական և անհրաժեշտ պայմաններից մեկն է»։

Հետաքրքիր է նաև Շահումյանի կանխագուշակությունը ազգային լեզուների ապագայի մասին։ 1916 թվականին՝ «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը» հոդվածում գիտական խորը կանխատեսությամբ նա գրում է. «Հնդհանուր լեզու ժամանակի ընթացքում կարող է մշակվել քաղաքակիրթ երկրներում, հետո գուցե և ամբողջ երկրագնդիս վրա, դա այնքան էլ ուտոպիական չէ, ինչպես թվում է շատերին»[5]։

Ստ. Շահումյանը մերկացնում է հայ բուրժուա-կղերական-նացիոնալիստական պատմագրությունը, որը խոսում էր ընդհանրապես «հայոց ազգի» մասին և ամեն անգամ նրա պատմությունը սկսում Նոյի առասպելից. Հայկից և Բելից։ Իրականում, հայ ազգի կազմավորումը ևս սկսվում է կապիտալիզմի զարգացումից։ Իհարկե խոսքը հայ բուրժուական ազգի մասին է, ազգ, որը կազմված էր հակադիր դասակարգերից բուրժուազիայի իշխանությամբ։

Ստ. Շահումյանը ելնելով կոնկրետ իրականությունից, ժողովրդական մասսաներին բացատրում էր ազգերի մեջ եղած հակամարտ դասակարգերի գոյությունը և կոչ անում աշխատավորներին իրենց ձեռքը վերցնելու ազգի բախտի տնօրինումը։ Չէ որ ամեն ազգի հոգին աշ-

---

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 240։
[2] Նույն տեղում, էջ 290։
[3] Նույն տեղում, հ. 1, էջ 199։
[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 498։
[5] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 400։

խատավոր մասսաներն են, նրա բոլոր բարիքների ու առաջավոր տրադիցիաների ստեղծողները։ Բուրժուական ազգերի բախտը կապված է կապիտալիզմի բախտի հետ և նրա կործանումով ստեղծվում են նոր, սոցիալիստական ազգեր, ինչպիսիք այժմ գոյություն ունեն մեր Հայրենիքում և ժողովրդական դեմոկրատիայի երկրներում։ Ստ. Շահումյանը «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» աշխատության մեջ խոսելով ազգերի ապագայի մասին, գրում է. «Մենք գիտենք, որ ազգությունը, որպես հասարակական կատեգորիա պատմական, այսպես ասած, «անցողական» երևույթ է և ոչ «բնական», հավիտենական»։ Այս հայացքը պարունակում է հանճարեղ կանխագուշակություն ազգերի ապագայի մասին, ընդ որում կասկածից վեր է, որ նախքան ամբողջ աշխարհում կոմունիզմի լիակատար հաղթանակի պայմաններում համաշխարհային լեզվի ստեղծումը, Շահումյանը նախատեսում էր բոլոր ազգերի ազատագրում կապիտալիզմի շղթաներից և նրանց աննախընթաց զարգացում հասարակական կյանքի բոլոր բնագավառներում։ Ստ. Շահումյանը ոչ միայն նախատեսում էր այդ, այլև անմիջականորեն պայքարում դրա իրականացման համար։

* * *

Ստ. Շահումյանն անշուշտ պայքար էր մղում ոչ միայն ազգի մարքսիստական տեսության անաղարտության, այլև ազգային հարցի լուծման բոլշևիկյան ծրագրի համար։ Նա ցույց է տալիս, որ ազգային հարցը կապիտալիզմի ծնունդ է։ Այն արդյունք է ազգային ճնշման, որը հանգեցնում է գալիս կապիտալիզմի հետ միասին և էլ ավելի ուժեղանում իմպերիալիզմի ցարաշրջանում։ Ազգային հարցն ամենից առաջ առաջանում է բազմազգ կապիտալիստական պետություններում, երբ ազգերից մեկը տիրապետող է դառնում մնացածների նկատմամբ. «Միայն այն ժամանակ,—գրել է Ստ. Շահումյանը,—երբ արդի կապիտալիզմի և իմպերիալիզմի հրամայողական պահանջի շնորհիվ ծնունդ առան այժմյան մեծ պետությունները՝ բաղկացած մի քանի ազգերից, միայն այն ժամանակ հենց և հենց այդ պետությունների սահմաններում ծնունդ առավ ազգային հարցը»[2]։ Այդպիսով կապիտալիզմը ոչ միայն ուժեղացնում է դասակարգային ճնշումը, այլև իր հետ բերում է ազգային կատաղի ճնշում։

Ազգային ճնշման հողի վրա բորբոքվում են ազգային շարժումները, որովհետև ճնշված ժողովուրդները չեն ուզում հաշտվել իրենց ստրկական դրության հետ։ Այդպես առաջ է գալիս ազգային հարցը, որի արմատական լուծումը մարքսիզմ-լենինիզմը կապում է կապիտալիզմի կործանման և սոցիալիզմի հաղթանակի հետ։ Այդ առթիվ Շահումյանը գրում է. «Ազգային հակասությունները և ներհակությունները անհրաժեշտ բաղկացուցիչ մասն են այն մեծ սոցիալական հակասության, որ գոյություն ունի ժամանակակից բուրժուական հասարակության մեջ և կոչվում է կապիտալ և աշխատանքի պրոբլեմ։ Ազգային հակասության կատարյալ վերացումը, ուրիշ խոսքով՝ ազգային հարցի արմատական լուծումը անհնարին է, բանի դեռ գոյություն ունի կապիտալիստական արդյունաբերությունը։ Այդ հակասությունը կարող է վերանալ միայն այն ժամանակ, երբ վերջ կդրվի ներկա սոցիալական կարգերին, երբ աշխատանքը կազատագրվի կապիտալի լծից»[3]։ Այս դրույթը, որ առաջ է բաշում Շահումյանը, ինչպես հայտնի է, լիովին կենսագործվել է ՍՍՌՄ-ում և ժողովրդական դեմոկրատիայի երկրներում։

Շահումյանը միաժամանակ նշում է, որ ազգային շարժումների ուղին բավականին բարդ է։ Սկզբնական շրջանում նրանց գլուխ է անցնում ազգային բուրժուազիան, որպեսզի ծածանելով «ազգի» ու «հայրենիքի» դրոշը, կողմնակիցներ հավաքի ու անբաժանորեն ձեռք բերի շահագործման իր ազգային օջախը, շուկան՝ ընդդեմ այլ ազգերի բուրժուազիայի։

Ազգային շարժումների զարգացման այս էտապը չի կարող երկար տևել, որովհետև ազգային շարժումների ուժը որոշվում է ազգի աշխատավոր մասսաների մասնակցության աստիճանով և շուտով դասակարգային ինքնաճանաչության եկած պրոլետարիատը իր ձեռքն է վերցնում շարժման ղեկավարությունը, ազգի աշխատավոր մասսաներին համախմբում իր դրոշի տակ։

Չնայած դրան մարքսիստները պաշտպանում են բոլոր այն ազգային շարժումները, թեկուզ և բուրժուազիայի գլխավորությամբ, որոնք ուղղված են օտար նվաճողների, իմպերիալիստների դեմ և հետապնդում են ազգային անկախություն։ Կոմունիստական պարտիաները հետևողակա-

---

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 209։
[2] Նույն տեղում, հ. 2, էջ 224։
[3] Նույն տեղում, հ. 1, էջ 210։

նորեն կիրառում են Վ. Ի. Լենինի հայտնի ցուցումը այն մասին, որ «ճնշված ազգի յուրաքանչյուր բուրժուական նացիոնալիզմի մեջ կա համադեմոկրատական բովանդակություն ընդդեմ ճնշման, և հենց այդ բովանդակությունն է, որ մենք անպայման պաշտպանում ենք»[1]։ Ստ. Շահումյանը իր հերթին խոսել է «նացիոնալ-դեմոկրատիզմի» մասին[2] և ցույց տվել, որ պատմական համապատասխան պայմաններում, հատկապես նախորդ շրջաններում, նա կատարել է առաջադիմական դեր։

Այդ բոլորով հանդերձ, մարքսիզմ-լենինիզմն ուսուցանում է, որ կապիտալիզմի շրջանակներում երբեք ազգային հարցը չի կարող արմատականորեն լուծվել։ Ավագույն դեպքում կարող են այս կամ այն պատճառով որոշ չափով մեղմացվել ազգային ճնշումները։

Շահումյանը պարզ ու հստակ ձևով ընդգծել է, որ ազգային հարցի վերջնական լուծումը կապված է սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի հետ։ Կապիտալիզմի կործանումով կլուծվի նաև ազգային հարցը, որովհետև կվերանա ազգային ճնշումը և սոցիալիզմի ժամանակ բոլոր ժողովուրդները ձեռք կբերեն քաղաքական, տնտեսական ու կուլտուրական ինքնուրույնություն և զարգացման լայն հնարավորություններ։ Ուստի, ինչպես նշում է Ստ. Շահումյանը, ազգային հարցի ընդավառում բոլշևիկները հենց սկզբից առաջ են քաշել հետևյալ պահանջները. 1) քաղաքացիական կատարյալ հավասարություն պետության բոլոր հպատակների համար — անխտիր ազգից ու ցեղից. 2) ազգային կուլտուրայի զարգացման, ուրիշ խոսքով լեզվի. խղճի, գրականության և այլնի կատարյալ ազատություն, 3) քաղաքական ինքնորոշման իրավունք պետական կազմի մեջ մտնող բոլոր ազգերի համար։

Շահումյանը հանգամանորեն լուսաբանում է ազգային հարցի բոլշևիկյան ծրագիրը և մերկացնում II Ինտերնացիոնալի ու ռուսական մենշևիկների օպորտունիստական ծրագիրը։

Երկրորդ Ինտերնացիոնալի ծրագիրը ազգային հարցում մշակել էր ավստրիական դպրոցը (Բաուեր, Շպրինգեր) և կոչվում էր «կուլտուր-ազգային ավտոնոմիա»։ Շուտով այն դարձավ բունդականների և ռուսական մենշևիկների սեփականություն։ Հայ իրականության մեջ «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» ջատագովն ու երկրպագուն սպեցիֆիզմն էր, որ Լենինը բնութագրեց որպես «բունդական կրեատուրա», «գրականագետ-կազմալուծիչների ջայկա»[3], Բայց, ինչպես մատնանշում էր Ստ. Շահումյանը, հայ բուրժուական ու մանրբուրժուական բոլոր պարտիաներն ու հոսանքները տոռապում էին նույն ախտով. «Մեզանում,— գրում է Շահումյանը,— չկա մի պարտիա՝ կղերական թե բուրժուական, «խավարամիտ» թե «ազատամիտ», որ կողմնակից չլինի ազգային-կուլտուրական ավտոնոմիային։ Թե՛ տերտերական «Հովիտ»-ը, թե՛ հայ վաճառականների օրգան «Մշակ»-ը և թե՛ հայ մանրբուրժուական ու քաղքենիական ինտելիգենցիայի բերան «Հորիզոն»-ը, բոլորն էլ հայոց ազգի փրկությունը տեսնում են այդ ավտոնոմիայի մեջ»[4]։

Նացիոնալիստական այդ մոլուցքի դեմ է ուղղված Շահումյանի «Ազգային-կուլտուրական-ավտոնոմիայի մասին» աշխատությունը, որտեղ հատկապես մերկացվում է Դ. Անանունը՝ հայկական կյանքի այդ «ճանաչված ու պատենտավոր» նացիոնալիստ-իդեոլոգը։ Շահումյանն անողոքաբար խարազանում է նաև «գրական աֆերիստ», «բախտախնդիր» ու «քրեական տիպ» Բախշի Իշխանյանին։

Բանն այն է, որ այդ ստահոդ գրչակները նույնիսկ փորձում էին հանդես գալ մարքսիզմի անունից և հիմնավորել «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի պահանջը մարքսիզմի տեսակետից»։ Մերկացնելով սպեցիֆիկների չարանենգ նպատակները Շահումյանը կոչ է անում հայ բանվորներին, որ նրանք «հալած յուղի տեղ չընդունեն ամեն մի տեղից վերկացող և իրեն «մարքսիստ» հայտարարող պարոնների ապապակները։ Հարկավոր է անխնա հարվածել ու հալածել մարքսիզմը շահագործող ու ապականող այդ բախշիներին»։

Շահումյանը ցույց է տալիս, որ ազգային հարցը լուծելիս մարքսիստների չափանիշն է հասարակության առաջխաղացման շահը, պրոլետարիատի ազատագրական պայքարի հաղթանակի շահը, ժողովուրդների ազատագրման և նրանց ինտերնացիոնալ միասնության շահը. «Մենք ունենք միայն մի հատ ընդհանուր և պարտադիր սկզբունք, մի հիմնական կշռաչափ. դա մարդկության տնտեսական զարգացման և առաջադիմության շահերն են, որոնց հետ ներ-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 513։
[2] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 398։
[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 34, էջ 383։
[4] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 272։

կայումս ներքին, անրաժանելի կապով կապված են՝ բանվոր դասակարգի միջազգային ազատագրական շարժման շահերը: Այդ է գերագույն սկզբունքը»[1]։

Այնուհետև Շահումյանը բայլ առ բայլ, մարքսիստական հետևողականությամբ մերկացնում է կուլտուր-ազգային ավտոնոմիայի էությունը։ Ըստ այդ ռեակցիոն ծրագրի ավտոնոմիա է տրվում ոչ թե մի որոշակի տերիտորիայի վրա ապրող, ազգային տեսակետից թիչ թե շատ միասեռ բնակչությանը, այլ տվյալ ազգին պատկանող բոլոր անհատներին, անկախ նրանց բնակության վայրից։ Ընդ որում այդ ազգությունները կունենան միայն կուլտուրական ավտոնոմիա՝ առանց որևէ քաղաքական ֆունկցիաների։ Նրանք լիովին ենթակա են բուրժուական կենտրոնական կառավարությանը և իրավունք ունեն միայն տնօրինել իրենց կուլտուրական գործերը՝ ունենալ մայրենի լեզվով գիր-գրականություն, դպրոցներ, թատրոններ, եկեղեցիներ, կրոն և այլն։ Կուլտուրական գործերը վարելու համար կստեղծվեն այնպիսի ազգային հիմնարկներ, որոնք, ըստ Դ. Անանունի, նման կլինեն «եկեղեցու կազմակերպության»։

Ուրեմն, կուլտուր-ազգային ավտոնոմիայի տակ հիմնականում հասկացվում է դպրոցական-կրթական գործի կազմակերպում ըստ ազգային լեզուների։ Ստ. Շահումյանը ցույց է տալիս, որ կուլտուր-ազգային ավտոնոմիան ամենից առաջ ռեֆորմիստական պահանջ է, որովհետև նա անփոփոխ է թողնում տիրող բուրժուական ռեժիմը և միայն ձգտում է հասնել այսպես կոչված «լեզուների իրավահավասարության»։ Նույնիսկ այդ ձևով կուլտուր-ազգային ավտոնոմիայի պահանջը անիրագործելի է կապիտալիզմի պայմաններում, որովհետև բուրժուական հասարակությունը կառուցվում է նաև ազգերի անիրավահավասարության հիմքի վրա։ Մյուս կողմից՝ եթե անգամ մի բոպե ենթադրվի, թե բուրժուական երկրներում բոլոր ժողովուրդներին հնարավորություն է տրվում թեկուզ որոշ չափով ունենալու մայրենի լեզվով դպրոցներ, ապա մի՞թե դա է հարցի էությունը. չէ՞ որ գլխավորը ոչ թե ձևն է, այլ բովանդակությունը։ Ահա թե ինչու Շահումյանը մատնանշում է, որ, իհարկե, մարքսիստները պայքարում են դպրոցական-կրթական գործի կազմակերպման համար հենց մայրենի լեզվով, բայց նրանք դրա հետ միասին և ամենից առաջ ուշադրություն են դարձնում այն հանգամանքի վրա, թե ի՞նչ են ուսուցանում. «Մենք հոգում ենք ոչ միայն այն մասին, թե ինչ լեզվով են սովորեցնում երեխաներին, այլև այն մասին, թե ինչ են սովորեցնում, ինչ ոգով, ինչ ուղղությամբ են դաստիարակում մեր զավակներին։ Սոցիալ-նացիոնալիստները ի նկատի ունեն միայն ձևը, մենք ի նկատի ունենք նաև բովանդակությունը: Եվ այդ դեռ բոլորը չէ, նրանք այդ ձևի համար զոհում են բովանդակությունը: Ահա թե ինչու մենք այսքան հակառակ ենք նրանց»[2]։ Եվ իրոք, չէ՞ որ տիրող շահագործողական ռեժիմի պայմաններում, թեկուզ մայրենի լեզվով, դպրոցներում դասավանդվում է միայն բուրժուական ռեակցիոն իդեոլոգիա, որն իր էությամբ նացիոնալիստական է։ Այստեղից հասկանալի է, որ կուլտուր-ազգային ավտոնոմիայի պահանջը բուրժուա-նացիոնալիստական ծրագիր է։

«Ինտելիգենցիան և նացիոնալիզմը» նշանավոր երկում, որն ամենայն իրավամբ կարևոր ներդրում է ազգային հարցի մարքսիստական գրականության մեջ, Ստ. Շահումյանը հատուկ ուժով բացահայտում է նացիոնալիզմի ողջ վնասակարությունը, հատկապես իմպերիալիզմի դարաշրջանում։ Նա ցույց է տալիս, որ նացիոնալ-իմպերիալիզմը «ավելի վտանգավոր չափեր ու արտահայտություններ ունի» և դրա հետևանքով անողոքաբար կեղեքվում ու ստրկացվում են հետամնաց երկրները, մեծ ու փոքր ժողովուրդները, կազմակերպվում են զարհուրելի պատերազմներ ու ահավոր ջարդեր։ Այդ բոլորը կատարում են իմպերիալիստները նացիոնալիզմի թունոտ զենքի օգնությամբ։ Նրանց տնտեսական զինակիցներ են ռեֆորմիստները, որոնց անողոքաբար խարազանել է Ստ. Շահումյանը։ Նա նշել է, որ նացիոնալիզմն ու օպորտունիզմը հարազատ քույրեր են և լրացնում են միմյանց, սերտաճում իրար մեջ։

Աննկուն բոլշևիկ Ստ. Շահումյանը հայ իրականության մեջ մինչև վերջ մերկացնում ու ջախջախում է կուլտուր-ազգային ավտոնոմիայի ծրագիրը, որպես բուրժուական, նացիոնալիստական ռեակցիոն ծրագիր։ Շահումյանը շատ պատկերավոր ձևով մատնանշում է, որ Դ. Անանունի բարոզած իբր թե «նոր խոսքը», այսինքն՝ կուլտուր-ազգային ավտոնոմիան «պառաված ու վարկաբեկված օրիորդ է», որին շատ դժվար է ամուսնացնել։ Նրա համար կարելի է գտնել ոչ թե բանվոր փեսացուներ, այլ դաշնակցական երկրպագուներ, քանի որ Դ. Անանունի

---

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 280—281։

[2] Նույն տեղում, էջ 301։

պահանջի «տակ երկու ձևորով կստորագրի ամեն մի հորիզոնական, ամեն մի դաշնակցական»[1]։ Այդպես էլ եղավ. դաշնակցության պարտիան ոչ միայն իր որդան «Նոր հոսանք»-ում տպագրեց Դ. Անանունի նացիոնալիստական հոդվածաշարը, այլև այն համարեց «խիստ ուշագրավ» ու հաճույքով ընդգծեց, որ «լիովին համերաշխ է հոդվածագրի հետ»[2]։

Բոլշևիկների, բանվորների ու գյուղացիների համար կարևոր նշանակություն ուներ ոչ միայն կուլտուր-ազգային ավտոնոմիայի մերկացումը, այլև ազգային հարցի բոլշևիկյան ծրագրի պարզաբանումն ու մասսայականացումը։ Այդ ծրագրի հիմնական լոզունգը ազգերի ինքնորոշման իրավունքի պահանջն է, որը յուրաքանչյուր ազգի հնարավորություն է տալիս կամովին անօրինելու իր բախտն այնպես, ինչպես ինքն է ցանկանում, ընդհուպ մինչև առանձին պետականություն կազմելը։ Խոսելով բոլշևիզմի ազգային ծրագրի էության մասին Լենինը գրում է, որ «մարքսիստների ծրագրում ազգերի ինքնորոշումը պատմատնտեսական հայեցակետից չի կարող այլ նշանակություն ունենալ, բացի բաղաքական ինքնորոշումից, պետական ինքնուրույնությունից, ազգային պետություն կազմելուց»[3]։

Ազգերի ինքնորոշման իրավունքը ռևոլյուցիոն պահանջ է, որն ապահովում է բոլոր ժողովուրդների տնտեսական, բաղաքական ու կուլտուրական զարգացման հնարավորություն։ Այդ պահանջը ելնում է ազգերի իրավահավասարության անհրաժեշտությունից և ունի ինտերնացիոնալիստական բովանդակություն։ Առաջ բաշելով ազգերի ինքնորոշման իրավունքի լոզունգը, բոլշևիկները այն ի սպաս էին դնում պրոլետարիատի ու աշխատավոր մասսաների շահերին։ Ռուսաստանում բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի ժամանակ այդ լոզունգը հատկապես կապված էր ագրարային հարցի լուծման և երկրի դեմոկրատացման հետ, իսկ սոցիալիստական ռևոլյուցիայի շրջանում այն դիտվում էր որպես սոցիալիստական դեմոկրատիայի ձևերից մեկի պահանջ, որը կենսագործվեց պրոլետարիատի հաղթանակից հետո։

Ստ. Շահումյանը ամբողջովին կանգնած է ազգերի ինքնորոշման իրավունքի լենինյան ծրագրի պաշտպանության դիրքերում։ Բնորոշ է, որ դեռ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» Մանիֆեստում առաջ բաշելով այդ դրույթը նա գրել է. «Ապագա Ռուսաստանում մենք թողնում ենք յուրաքանչյուր ազգի իրան որոշելու յուր դրությունը»[4]։ Ստ. Շահումյանը ազգային հարցի վերաբերյալ գրած իր աշխատություններում հաճախակի վկայակոչում է պարտիայի ծրագրային կետը՝ ազգերի ինքնորոշման իրավունքի մասին և մատնանշում, որ «մենք գերադասում ենք դավանել մեր «հին», բայց մարքսիստական ծրագիրը»։

Շահումյանը ազգային հարցի լուծման հիմքում դնում էր պրոլետարիատի և մյուս աշխատավորների շահը։ Նա գտնում էր, որ ազգերի ինքնորոշումը տալիս է ինքնուրույն ազգային պետություններ կազմելու իրավունք, բայց այդ չի նշանակում, թե ամեն անգամ պետք է խրախուսել անջատումը։ Ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան պետք է միջամտի ազգային հարցի լուծմանը և ամեն անգամ այն կապի ազգի մեծամասնությունը կազմող աշխատավոր մասսաների շահերի հետ։ Շահումյանը նշում է, որ, օրինակ, Ռուսաստանի ժողովուրդների համար ձեռնտու չէ առանձնացումը, որովհետև նրանց ազատագրման գլխավոր նախապայմանը համառուսական պրոլետարիատի միասնությունն է. «Պրոլետարիատի ուժը,— գրում է Շահումյանը,— կազմում է նրա դասակարգային միջազգային համերաշխությունը։ Թե՛ ներկայումս, այս ռևոլյուցիայի ընթացքում, և թե՛ ապագա ազատ Ռուսաստանում, որքան ավելի սերտ կերպով միացած լինեն զանազան ազգությունների բանվորները, այնքան ավելի հաջող կերպով նրանք կարող են կռվել իրենց դասակարգային շահերի համար, այնքան ավելի կատարյալ կլինի դեմոկրատիայի հաղթությունը ներկայումս և այնքան ավելի հաստատ նրա պահպանման և պրոլետարիատի դասակարգային կռվի հաջողության դարանտիան ապագայում։ Առանձին ազգային պետությունները, նույնիսկ ավելի սահմանափակ ազգային առանձնացումները (ֆեդերացիան, ավտոնոմիան) պատնեշներ են կառուցում զանազան ազգերի պրոլետարիատի միջև և բաժանում ու մեկուսացնում են նրանց դասակարգային կռիվը»[5]։

Շարունակելով, Շահումյանը նշում էր, որ մենք դեմ ենք ազգերի բաժանմանը Ռուսաստանում, «բայց ինքնորոշման իրավունքը ճանաչում ենք, ինչպես, օրինակ, ճանաչում ենք խոսքի ազատության կամ խղճի ազատության իրավունքը»։

---

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 318։
[2] «Նոր հոսանք», 1913, № 1, էջ 236։
[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 198։
[4] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 46։
[5] Նույն տեղում, էջ 218։

Այդպիսով, բոլշևիկների ազգային ծրագրի համաձայն Ռուսաստանի ժողովուրդները պետք է համատեղ ջանքերով տապալեն ցարիզմն ու կապիտալիզմը և ստեղծեն սոցիալիստական միասնական պետություն՝ ունենալով լիակատար զարգացման բոլոր հնարավորությունները։ Դրան համապատասխան էլ բոլշևիկները մշակել են ժողովուրդների համագործակցության ու ազգային պետականության ձևերի հարցը։ Այսպես, դեռ ՌՍԴԲՊ II համագումարում ընդունված պարտիայի ծրագրով նախատեսվում էր Ռուսաստանի խոշոր մարզերին ու ազգություններին տալ մարզային ինքնավարություն, որը Պորոնինոյի խորհրդակցությունում փոխարինվեց մարզային ավտոնոմիայի պահանջով։

Ամբողջությամբ վերցրած Ստ. Շահումյանը լիովին պաշտպանել է լենինյան ազգային ծրագիրը, նրա բոլոր սկզբունքները։ Բայց Պորոնինոյի խորհրդակցությունից հետո որոշ մասնակի հարցերում նա ունեցել է իր կարծիքը և այդ մասին նամակներով խորհրդակցել Վ. Ի. Լենինի հետ։ Այդ տեսակետից առանձնապես հայտնի է Վ. Ի. Լենինին գրած նրա 1913 թ. նոյեմբերի 15-ի նամակը, որը դժբախտաբար մեզ չի հասել և նրա մասին գաղափար ենք կազմում Վ. Ի. Լենինի 1913 թ. դեկտեմբերի 6-ի պատասխան-նամակից։ Վ. Ի. Լենինն այնտեղ մեջբերումներ է կատարում Շահումյանի նամակից և այն ուղեկցում համապատասխան դիտողություններով։

Ինչպես արդեն նշել ենք, պարտիայի Կենտկոմի Պորոնինոյի խորհրդակցության բանաձևը «Ազգային հարցի մասին» Վ. Ի. Լենինն ուղարկել էր Ստ. Շահումյանին՝ նրա կարծիքն իմանալու։ Ասորաբանի արտորավայրից Ստ. Շահումյանը իր կարծիքն արտահայտում է հենց 1913 թ. նոյեմբերի 15-ի մեզ չհասած նամակով, որին Վ. Ի. Լենինը պատասխանում է նույն թվականի դեկտեմբերի 6-ին։ Քննարկվող հարցի լուսաբանման համար կարևոր նշանակություն ունեն նաև Ստ. Շահումյանի՝ Վ. Ի. Լենինին 1914 թ. մայիսի 30-ին գրած նամակը և 1918 թ. մարտի սկզբին գրած բացատրագիրը՝ Վ. Ի. Լենինի 1913 թ. դեկտեմբերի 6-ի նամակի հրապարակման կապակցությամբ։

Այդ բոլորից երևում է Ստ. Շահումյանի սկզբունքային միասնությունը Վ. Ի. Լենինի հետ ազգային հարցում։ Նա ամենից առաջ հետևողականորեն պաշտպանում է ազգերի ինքնորոշման իրավունքի պահանջը, որն առաջադրվել էր դեռևս ՌՍԴԲՊ II համագումարում ընդունված պարտիայի ծրագրում (§ 9)։ Պորոնինոյի խորհրդակցությունը, ինչպես նշում է Ստ. Շահումյանը, այդ ծրագրային կետին տալիս է «կոնկրետ մեկնաբանություն» և ազգերի ինքնորոշման իրավունքը դիտում «բացառապես որպես անջատման իրավունք»։ Ստ. Շահումյանը չհամաձայնելով նման սահմանափակման հետ, 1913 թ. նոյեմբերի 15-ի նամակում գրում է. «Ինքնորոշման իրավունքը չի նշանակում միայն անջատման իրավունք։ Նա նշանակում է նաև ֆեդերատիվ կապի իրավունք, ավտոնոմիայի իրավունք»[1]։ Վ. Ի. Լենինը վճռականորեն առարկում է դրա դեմ և ցույց է տալիս, որ ազգերի ինքնորոշման իրավունքը նշանակում է բացառապես անջատման իրավունք. «Այստեղ, բացի անջատման իրավունքից, ոչինչ. բացարձակապես ոչինչ չկա և չպետք է լինի»[2]։ Ապա Լենինը նշում է, որ ինքնորոշման մեջ չի կարող մտցվել ֆեդերացիայի իրավունքը, որովհետև «ֆեդերացիան հավասարների միություն է, միություն, որը ընդհանուրի համաձայնություն է պահանջում։ Իսկ ինչպես կարող է մի կողմը իրավունք ունենալ, որ իրեն հետ համաձայն լինի մյուս կողմը։ Դա աբսուրդ է»։ Ինչ վերաբերում է ավտոնոմիային, ապա, ընդգծում է Լենինը, այն «դեմոկրատական պետություն կառուցելու մեր պլանն է» և «մենք ավտոնոմիայի կողմնակից ենք բոլոր մասերի համար»[3]։

Վ. Ի. Լենինը իր 1913 թ. դեկտեմբերի 6-ի նամակում դիտողություն է անում Ստ. Շահումյանին նաև այն առթիվ, որ նա իր նամակում Ռուսաստանի վարչական բաժանման հարցում մարզային ինքնավարությունը գերադասում է մարզային ավտոնոմիայից, ինչպես նաև պահանջում է ռուսաց լեզուն համարել պետական։ Նա արդարացի է համարում ռուսաց լեզվի պրոգրեսիվության մասին Ստ. Շահումյանի տեսակետը, բայց միաժամանակ նկատում, որ «նա (ռուսաց լեզուն,— Մ. Ա.) ավելի ևս մեծ չափով պրոգրեսիվ նշանակություն կունենար, եթե հարկադրանք չլիներ։ Ի՞նչ է, մի՞թե «պետական լեզուն» չի նշանակում մի մահակ, որ ետ է մսում ռուսաց լեզվից»[4]։

---

[1] Մեջբերումը կատարում ենք ըստ Վ. Ի. Լենինի պատասխան նամակի (տե՛ս Երկեր, հ. 19, էջ 625)։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 626։

[3] Նույն տեղում, էջ 625։

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 623։

Ընդհանուր պատկերը պարզ է։ Ստ. Շահումյանը անվերապահորեն պաշտպանել է ազգերի ինքնորոշման իրավունքը, որպես պարտիայի հիմնական ծրագրային պահանջ ազգային հարցում։ Եվ 1918 թ. մարտին ինքը՝ Ստ. Շահումյանը հրատարակելով Վ. Ի. Լենինի 1913 թ. դեկտեմբերի 6-ի նամակը, որպեսզի հակահարված տա թշնամական հերյուրանքներին՝ ազգերի ինքնորոշման իրավունքի հարցում, գրում է. «Ամեն մի գրպարտչական հարձակում բոլշևիկների հասցեին, որոնք իրը թե, իշխանության գլուխ կանգնելով դավաճանել են ինքնորոշման վերաբերյալ իրենց հայացքներին,—վերանում է ինքնին։ Մենք բնկեր բանվորներին հանձնարարում ենք խոր ուշադրությամբ կարդալ բնկ. Լենինի այդ նամակը, որովհետև ազգային հարցը մեր ռևոլյուցիայի կարևորագույն հարցերից մեկն է»[1]։

Այս բոլորից հետո խորապես սխալ են այն բնկերները, որոնք փորձում են ցույց տալ, որ իբր Ստ. Շահումյանը ժխտել կամ նենգափոխել է ազգերի ինքնորոշման իրավունքը։ Այսպես, Ս. Ի. Յակուբովսկայան գրում է, որ «Լենինը Շահումյանին ուղղած նամակում (նկատի ունի 1913 թ. դեկտեմբերի 6-ի նամակը.— Մ. Ա.) բողոքում է ազգերի ինքնորոշման լոզունգը ֆեդերացիայի իրավունքի լոզունգով նենգափոխելու դեմ, այդպիսի փոխարինման մեջ տեսնելով շեղում ազգային հարցի միակ ճիշտ լուծումից»[2]։ Ինչպես հասկանալի է, որ Ս. Յակուբովսկայան փաստերն աղավաղում է և Ստ. Շահումյանի վրա բոլորովին անտեղի մեղադրանք բարդում։ Չէ որ երբեք և ոչ մի տեղ Ստ. Շահումյանը ազգերի ինքնորոշման իրավունքը չի փոխարինել ֆեդերացիայի իրավունքով և ոչ էլ շեղվել է ազգային հարցի ճիշտ լուծումից։

Պատեհ առիթով անհրաժեշտ է լիակատար պարզություն մտցնել նաև ֆեդերացիայի հարցում։ Ճիշտ է, Ստ. Շահումյանը միաժամանակ թյուրիմացաբար ազգերի ինքնորոշման իրավունքի մեջ մտցնում է նաև ֆեդերատիվ կապի իրավունքը, բայց ընդհանուր առմամբ ֆեդերացիայի հարցում նա կանգնած էր Լենինյան դիրքերի վրա, այսինքն նախառևոլյուցիոն ժամանակներում բացասական վերաբերմունք ուներ դեպի այն։ Եվ դա բնական է, որովհետև ֆեդերացիան հակասում էր կենտրոնացված պետության սկզբունքին, որը պաշտպանում էին բոլշևիկները։ Այս հարցի առթիվ հատուկ ուշադրության է արժանի «Ազգային հարցի մասին» բանաձևը, որը գրել է Ստ. Շահումյանը և ընդունվել է որպես պարտիական որոշում Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների 1915 թ. հոկտեմբերյան խորհրդակցությունում։ Այնտեղ ասված է. «Հավատացած լինելով, որ ազգային հարցը Ռուսաստանում լուծվելու է հենց մեր ծրագրում նշված ուղիով (այսինքն՝ ազգերի ինքնորոշման իրավունքի կենսագործմամբ —Մ. Ա.) և ուտոպիական համարելով Ռուսաստանի ֆեդերատիվ բաժանման ու կուլտուր-ազգային ավտոնոմիայի պահանջը, մենք արձանագրում ենք, սակայն, որ ներկայումս այդ պահանջների պրոպագանդան կրում է ծայր աստիճան վնասակար, ռեակցիոն բնույթ։ Փոխանակ բանվորներին ու բնակչության դեմոկրատական խավերին մերձեցնելու հանուն այն պայքարի, որ մղվում է ինտերնացիոնալ համադեմոկրատական իդեալների համար, դրանք ուժեղացնում են ազգային երկպառակությունն ու թշնամանքը»[3]։

Ինչ վերաբերում է ֆեդերացիայի կամ ավտոնոմիայի հիշատակությանը Ստ. Շահումյանի դեռևս 1906 թվականին գրած «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» աշխատության մեջ, ապա այնտեղ խոսքը վերաբերում է պետության կառուցվածքի ձևերին և արդարացիորեն նշված է, որ եթե պրոլետարիատի, աշխատավոր ժողովրդի շահը երբևիցե պահանջի, նա կարող է օգտագործել նաև ֆեդերացիան, որպես հնարավոր միջոցառում որևէ ժամանակաշրջանի համար։ Ահա թե ինչու նա գրում է. «Ով վերագրում է մեզ... «դոգմատիկ» վերաբերմունք դեպի հասարակական-քաղաքական խնդիրները, նա ցույց է տալիս, որ ինքը ոչ մի ծանոթություն չունի դոգմատիզմի և վերբալիզմի ամենակատաղի թշնամի մարքսիստական աշխարհայեցողության հետ։ Կրկնում ենք, մեզ համար ցենտրալիզմի կամ ֆեդերալիզմի խնդիրը աբսոլյուտ սկզբունքի հարց չէ, այլ բացառապես նպատակահարմարության կամ պատմական տեխնիկայի հարց։ Եթե մի որևէ դեպքում մենք գտնենք նպատակահարմար պրոլետարիատի շահերի տեսակետից ավտոնոմիա կամ ֆեդերացիա պահանջել, մենք այդ կպահանջենք[4]։ Հենց այդպես էլ եղավ, օրինակ, մեզ մոտ՝ Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո։ Ինչ խոսք, որ մենք ի հակադրություն

---

[1] Ստ. Շահումյան. Երկեր, հ. 3, էջ 122—123։

[2] С. И. Якубовская. Объединительное движение за образование СССР. ОГИЗ, 1947, էջ 16։

[3] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 360։

[4] Նույն տեղում, հ. 1, էջ 224։

բուրժուական ֆեդերացիայի կիրառեցինք սովետական ֆեդերացիա, որպիսին և ըստ էության կանխագուշակում էր Ստ. Շահումյանը։

Շահումյանի ողջ պայքարն ազգային հարցում հանգում էր բոլոր ժողովուրդների ազատագրմանը կապիտալիզմի շղթաներից։ Նա գտնում էր, որ ազգերի ինքնորոշման բոլշևիկյան ծրագիրը կարող է կենսագործվել միայն ռևոլյուցիայի միջոցով, որը կխորտակի բուրժուական հասարակարգը և դրա հետ միասին կլուծի ազգային հարցը։ «Հետևողական մարքսիստները,— գրում էր Շահումյանը,— հայտարարում են, որ ազգային կռիվը և ճնշումները անկարելի է վերացնել, քանի դեռ գոյություն ունի մասսաների ճնշման ու շահագործման վրա հիմնված ռեժիմյան հասարակարգը»[1]։

Ստ. Շահումյանի կանխատեսումը հաստատվեց կյանքով։ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև բազմաչարչար հայ ժողովրդին բերեց ոչ միայն սոցիալական ազատություն, այլև ազգային վերածնունդ։

Ազատարար Հոկտեմբերից հետո Կոմունիստական պարտիայի ականավոր գործիչ Ստ. Շահումյանն իրեն դրսևորեց նաև որպես Սովետական բազմազգ պետության կառուցողներից մեկը։ Նա Կովկասի գործերի ժամանակավոր Արտակարգ կոմիսարի պատասխանատու պոստում անմիջականորեն գլխավորում էր Երկրամասում Սովետական իշխանության համար մղվող պայքարը և կոչ անում տեղական բոլոր ազգությունների բանվորներին ու գյուղացիներին ստեղծելու «Ինտերնացիոնալ բանվորա-գյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների ու Ժողովրդական Կոմիսարների Սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով՝ վերջ կդնի Կովկասի կոնտրռևոլյուցիային և երկրի բանվոր ու գյուղացի բնակչության կառաջնորդի դեպի լուսավոր ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությունը»։

Ստ. Շահումյանը մերկացնելով մուսավաթական պարտիայի պարագլուխ Ռասուլ-զադեին, ցույց է տալիս, որ ի հակադրություն մուսուլմանական նացիոնալիստների կործանարար բաղաքականության, բոլշևիկները ադրբեջանական ժողովրդին տալիս են ինքնորոշման իրավունք և պայքարում նրա ազատության համար։ Շահումյանը վիթխարի ջանքեր գործադրեց նաև Ժողկոմսովետի՝ «Թուրքահայաստանի» ազատ ինքնորոշման մասին Դեկրետի կենսագործման համար, բայց բուրժուական նացիոնալիստները և օտարերկրյա իմպերիալիստները անհավասար պայմաններում ամեն կերպ արգելակեցին այն։

Ստ. Շահումյանը ղեկավարելով Բաքվի հերոսական կոմունան, հետևողականորեն անց էր կացնում Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականությունը։ Բնորոշ է, որ նրա գլխավորած Բաքվի Ժողկոմսովետը կազմված էր ինտերնացիոնալ հիմունքով և իր հռչակած Դեկլարացիայում անմիջապես լիակատար համերաշխություն արտահայտեց Սովետական Ռուսաստանի կենտրոնական կառավարության հետ։ Այնտեղ կոչ էր արվում բոլոր աշխատավորներին առանց ազգային խտրության ցուցաբերել «բնդհանուր պատասխանատվության գիտակցություն և համերաշխ բնդհանուր աշխատանք Սովետի շուրջը հանուն աշխատանքի ազատագրության մեծ իդեալների, որ հռչակել է Հոկտեմբերյան բանվորա-գյուղացիական ռևոլյուցիան»[3]։

Բաքվի Ժողկոմսովետը կատարում էր առավելագույնը՝ կենսագործելու համար ժողովուրդների իրավահավասարության բոլշևիկյան սկզբունքը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, այդ թվում նաև դպրոցական-կրթական գործի կազմակերպման ասպարեզում։ Ստ. Շահումյանն ընդգծում էր, որ մատաղ սերնդի և բնդհանրապես աշխատավորության դաստիարակության գործում գլխավորը ինտերնացիոնալիզմն է։ Ի տարբերություն հին դպրոցի, հենց այդպիսի կոմունիստական դաստիարակություն է տալիս նոր դպրոցը։

Դժբախտաբար Բաքվի կոմունան կարճատև կյանք ունեցավ։ Բայց այդ ժամանակամիջոցում էլ նա Ստ. Շահումյանի գլխավորությամբ իրեն դրսևորեց որպես Սովետական բազմազգ պետության անրաժանելի մասը, որն անխոնջ կերպով պայքարում էր նաև ազգային հարցի արմատական լուծման համար ամբողջ Անդրկովկասում։

Այդպիսով Ստ. Շահումյանը իր ռևոլյուցիոն գործունեության հենց սկզբից ու մինչև եղեռնական մահը անշեղորեն պայքարում էր բոլոր ժողովուրդների ազատության ու եղբայրության համար։

---

[1] Ստ. Շահումյան. Երկեր, հ. 2, էջ 314—315։
[2] Նույն տեղում, հ. 3, էջ 69—70։
[3] Նույն տեղում, էջ 161։

Սովետական Միության օրինակը պերճախոս կերպով բացահայտում է ազգային հարցի բոլշևիկյան ծրագրի ճշմարտությունն ու կենսունակությունը։ Մեր երկրի ազատ ու երջանիկ ժողովուրդները ապրում են քաղաքական, տնտեսական ու կուլտուրական զարգացման աննախընթաց վերելք և կազմում սոցիալիստական ազգերի միասնական ընտանիք։

ՍՄԿՊ XXI համագումարը նոր հորիզոններ բացեց սովետական բոլոր ժողովուրդների հետագա առաջխաղացման համար։ Ընկ. Ն. Ս. Խրուշչովը ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին տված զեկուցման մեջ արդարացիորեն նշում է, որ ինչպես մեր բոլոր պլաններում, այնպես էլ յոթնամյակում «վառ կերպով արտահայտված է լենինյան ազգային քաղաքականությունը, որը լայն հնարավորություններ է ապահովում բոլոր ժողովուրդների էկոնոմիկայի ու կուլտուրայի համակողմանի զարգացման համար»[1]։ Ամենայն իրավամբ Սովետական Միությունը բազմազգ պետության կատարելության տիպար է։

СТЕПАН ШАУМЯН — ТЕОРЕТИК НАЦИОНАЛЬНОГО ВОПРОСА

М. В. АРЗУМАНЯН

(Резюме)

«Тяжелая артиллерия теоретического марксизма»,— таким был Степан Георгиевич Шаумян, выдающийся деятель Коммунистической партии и Советского государства, верный ученик и ближайший соратник великого Ленина.

Национальный вопрос занимает важное место в многогранной деятельности Ст. Шаумяна. Особенно следует отметить такие важнейшие произведения Ст. Шаумяна, как «Национальный вопрос и социал-демократия», «Реферат о национальном вопросе», «О национально-культурной автономии», «Интеллигенция и национализм», «Национальный вопрос и революционная социал-демократия» и т. д. Ст. Шаумян имел оживленную переписку с В. И. Лениным. В этой переписке всесторонне рассматривались и разрабатывались также важные вопросы национальной программы и политики большевистской партии.

Ст. Шаумян, как отмечала «Правда», являлся «одним из крупных знатоков и теоретиков национального вопроса». Ст. Шаумян последовательно отстаивал марксистско-ленинскую теорию и программу по национальному вопросу, дал научное определение нации, глубоко осветил процесс возникновения и развития наций и национальных движений, показал суть и значение большевистского программного лозунга о праве наций на самоопределение и разоблачил реакционный характер культурно-национальной автономии. Он решительно боролся против буржуазного национализма с позиций пролетарского интернационализма.

Непоколебимо борясь за большевистскую программу и политику по национальному вопросу, за равноправие, дружбу, свободу и счастье народов, Ст. Шаумян возглавил героическую Бакинскую коммуну и стал одним из активных строителей Советского социалистического многонационального государства.

---

[1] *Ն. Ս. Խրուշչով, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին, Հայպետհրատ, 1959, էջ 54։*